



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
 ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

**HOLY TRINITY
 ARMENIAN APOSTOLIC CHURCH
 OF GREATER BOSTON**

145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS, 02138
 ELIOT 4-3031

REV. FR. PAPKEN MAKSOUDIAN
 Rector

4 Մարտ 1965

Գերաշնորհ
 Տ. Սիրոն Ս. Արքեպիսկոպոս
 Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 նիւ Եորթ

Գերշ. Սրբազան Հայր,

Այսու կու գանք հաղորդելու Ձերդ Սրբազանութեան թէ Ս. Եկեղեցւոյս Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Փետրուար 28, 1965, Կիրակի կէսօրէ յետոյ ժամը 2-ին, Մշակութային Սրահին մէջ, 199 իրաւասու անդամներու ներկայութեան:

Օրուան դիւանի անդամներ ընտրուեցան նամակ ստորագրողները: Գաղտնի քուէարկութեամբ եւ յոյժ կանոնաւորութեամբ կատարուեցաւ Ծխական Խորհուրդի դադարեալ անդամներու ընտրութիւնը: Ընտրուեցան հետեւեալները քուէներու առաւելութեամբ.-

Ճան Սուրսուրեան	138 Թուէ	(Վերընտրութիւն)
Արչի Խօլլիկեան	129 Թուէ	
Արամ Հինգէլեան	123 Թուէ	
Լուի Ճանիկեան	111 Թուէ	
Փիթըր Կիւլիսսեան	107 Թուէ	(Վերընտրութիւն)
Մայքլ Ղազարեան	103 Թուէ	(Վերընտրութիւն)
Փիթըր Ադամեան	93 Թուէ	(Վերընտրութիւն 1 տարուան համար)

Ուստի կը խնդրենք Ձերդ Սրբազանութենէն որ վաւերացնէք սոյն ընտրութիւնը որպէս զի անյապաղ գործի ձեռնարկեն:

Այսու վաւերացման համար կը ներկիակենք նաեւ մեր եկեղեցւոյ յատուկ ներքին կանոններու ցանկ մը, որ նոյնութեամբ ընդունուած է Անդամական Ժողովէն:

Միհրան Կօշկարեան
 Միհրան Կօշկարեան
 Ատենադպիր
Helmy N. Demarjian
 Հէլըն Տէմիրճեան
 Անգլ.ի Ատենադպիր

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյր
 Մնամք Որդիական Ակնածանօք
Charles B. Garabedian
 Բաբգէն Ա. ԳՏՆՅ. Մագսուտեան
 Նախագահ
 Charles B. Garabedian
 Զարլս Պ. Կարապետեան
 Ատենադպետ

Յ.Գ.- Շուտով Ձեզի կ'ուղարկուի Եկեղեցւոյ 1964ի Տեղեկագիրը: